№ 32 — ՔՍԱՆ ԵՒ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՒՐԱԿԻ, 29 ԱՊՐԻԼԻ 1884

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տարեկան գինն է 10 ռուբլի։
վեց ամսւանը՝ 5 ռ., երեք ամսւանը՝ 3 ռ., ամիսը 1 ռ.։
Առանձին հասարներով իւրաքանչիւրը 5 կոպէկ։

Խմբագրատունը բաց է ամեն օր բացի կիւրակէ եւ տօն օրերից առաւօտեան 11—2 ժամը կէսօրից յետ։

Յառարարագրութիւն դիմում են ուղղակի խմբագրութեան հետեւեալ հասցէով.— Въ редакцію газеты «Мегу Айастани», въ Тифлисѣ, или Redaction de «Meghou Haïastani», à Tiflis. (Caucase).

Խմբագրութեանս ուղղած թէ յօդուածները եւ թէ նամակները պէտք է պարզ գրուած լինին գրողի ստորագրութեամբ եւ հասցէով. խմբագրութիւնը կարող է փոփոխել, ուղղել եւ կրճատել յօդուածները։ Խմբագրութիւնը իւր վերայ չէ առնում յետ ուղարկել յօդուածները եւ պահում է երկու ամիս մինչեւ ցպահանջ։

Յայտարարութիւնների համար վճարւում են ամեն մի բառին 2 կոպ։ Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։ Յայտարարութիւններ ընդունվում են խմբագրատանը, «Կովկաս» հրատարակչի տակ պ. Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում են պ. Շահվերդեանի պավիլիօնում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Կաթողիկոսական խնդիր։
Ներքին տեսութիւն. — Թղթակցութիւններ Բագուից, Կարսից, Մեծ-Ղարաքիլիսից և Ս. Էջմիածնից։
Քաղաքական։ — Քաղաքական լուրեր։
Մանր լուրեր։
Խառն լուրեր։
Յայտարարութիւններ։
Ֆելիետօն։

ԹԻՖԼԻՍ, 29 ԱՊՐԻԼ 1884 Թ.

—

Երանի շատ դայ մայիսի 7-ը եւ վերջ դնվի անախորժ խօսակցութեանց ամեն քունջ ու պռնգախառնուրդ եւ սուտ ու շինծու լուրերին, որոնք ստեղծվում են եւ տարածվում շահամոլ եւ խարդախ բայց հայ եկեղեցւոյ բարեկամ ձեւացող կեղծ ազգասէրներից, որոնք լինելով ինքնատէր անձինք, ոչինչ միջոց չեն խնայում այնպիսի անձանց մասին զրպարտութիւններ խօսելու, որոնց մասի եղունդի մէջ աւելի խելք եւ զգացմունք կայ, քան իրանց գլխում եւ քարացած սրտերում մեռած խղճմտանքում։ Դոքա մինչեւ անգամ այնքան յանդուգն են, որ առաջներնէր են պատմել տալիս եւ բարձր դիրք ունեցող պաշտօնեաներին, որոնց յաին անխելքն էլ չէ նկրիլ իրան այնպիսի պարզ կերպով խօսելու մի Ղազարոսի կամ Կիրակոսի հետ. եւ ոչէլ արժան կը համարի նրանց ընդունելու եւ նշանակութիւն տալու։ Բայց ի՞նչ արած, մեր խեղճ եւ չը կշռող ժողովուրդը հաւատում է այդ խարդախների ստեղծագործութեանց։ Էլ խօսք կ'ուզես ս. Էջմիածնից լարված ինարիգանների մասին, համբաւ կ'ուզես ազգային ժողովի պատգամաւորների եւ Ռուսաց դեսպանատան մէջ եղած իբրեւ թէ բանակցութեանց մասին, ներքես Սրբազանի հրաժարականի մասին, ս. Աթոռի միաբանից գաւազրծութեան մասին ապազայ կաթողիկոսի իրաւանց դէմ ինչ ասես, որ այդ աւտոմատները՝ ապուշները չեն կըլկոնում ամեն տեղ կարծես անզգայ յարար շարժված այն լարով, որով ծայրը ինարիգանների ուստաբաշի անզգա եւ իւր շահի համար ամեն բան վաճառելու եւ քանդելու պատրաստ մի հաստափոր կեղծ գործիչ, իսկապէս քանդիչն, ձեռքին է։ Այդ ազգային ստորերկրեայ շրջմոլեկները սխալվում են, եթէ կարծում են, թէ հասկացող հայի համար պարզ չեն համագումարի ընտրութիւնն, այս տեղ Հայրիկի բազմութիւն ձայնների չ'ստանալը եւ Ազգային ժողովի մէջ երկրորդ լընարելի դառնալը, ներքես Սրբազանի անվերջ հրաժարամոլութիւնը պատրիարքարանի վարմունքը եւ այլն եւ այլն։ Բայց լինարիգանների բաղդն է, որ ներկայն նոցանն է, որովհետեւ բազմութիւնը կշռող եւ դատող չէ, միայն լսող եւ հաւատացող է։

Ուղիղն ասած մեզ համար ցաւալի է եւ զղուելի այդ տեսակ գործաւարութիւնը մի սուրբ հարցի մէջ, որպիսին է կաթողիկոսական ընտրութեան խնդիրն։ Արդեօք Լուսաւորիչը բարձրից նայելով իւր յաջորդի ընտրութեան համար գործադրած այդ գործառնութեանց վերայ եւ նորա համար գործող ու ազդող անձանց տեսնելով պիտի օրհնէ այդ գործողութիւնն եւ արդիւնաւոր անէ ներկայի անարդար ձգանց պատուղը։ Ինչպէս չը վըդովի հասկացող մարդն անզգայ լսելով ներքես Պատրիարքի անվերջ հրաժարականը, սորա բացատրութիւնը ոմանց կողմից համեստութեամբ, այլոց կողմից ինտրիգայով եւ խաղերով, որոնք ոչ միայն վայել չեն Նորին Սրբազնութեան բարձր դիրքին եւ անուան, այլ եւ նուազեցնում են ակամայ հասկացող մարդոց յարգանքը դէպի նորա անձնաւորութիւնը։ Հրաժարականը մի անգամ կը լինի եւ կը վերջանայ—այդպէս պահանջում է հաստատամիտ եւ արդար մարդու պատիւն, որպիսին ցանկալի եղել է տեսնել միշտ Ներքես Պատրիարքին։ Մեզ համար հասկանալի կը լիներ միայն պաշտօնական հրաժարականը Սրբազան Ներքեսի, ուղղած Ազգային ժողովին եւ Էջմիածնայ ս. Սինօդին։ Երբ այս հաստատութեանց ուղղած հրաժարական չը կայ, ճնացածները չեն կարող բացատրվել Ներքեսականաց առաջ բերած «հատուածութիւն» խօսքով այլ աւելի հաստատութիւն են տալիս նոցա հակառակորդների բացատրութեան։ Յաւալի իրողութիւն է, որովհետեւ բնաւորում է Նորին Սրբազնութեան անձնաւորութիւնն եւ շօշափում նորա կշռնն, որ յոյժ կարեւոր էր իւր ամրողջ յափշտակող ուժով կաթողիկոսական գահի վերայ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒ

9 ապրիլ։

Նախորդ նամակումս (տես «Մեղու» № 21) ես խոստացայ գրել թէ ի՞նչ դեր կարող է խաղալ Շամախու թեմական դպրոցը՝ գիւղական ուսուցիչների վերաբերութեամբ։ Նախ ասելորդ է այստեղ կրկնել թէ Շամախին առաջ ինչ փայլ, ինչ հռչակ ունէր, թէ իւր ներքին վաճառականութեամբ եւ թէ իւր արտաքին տեսքով (շինութիւններով), քանի որ դորա մասին ասուած ու գրուած է։ Բանական է միայն յիշել որ Շամախին կազմելով մի կենդրոն շրջակայ գիւղերի։ այդ գիւղերը պէտք է անմիջական կախումն ունենային իւրեանց վաճառականութեամբ եւ վաճառականական կենդրոնը շրջակայ գիւղերի պէտք է Շամախին կազմէր՝ մենք հակառակն ենք տեսնում։ Շամախու վաճառականութիւնը ընկած է, ժողովուրդը թշրած եւ յուսահատած։ Իսկ գիւղացիք ընդհակառակն Շամախին առ երես թողած, իւրեանց վաճառականութիւնը ուրիշ քաղաքների հետ հաստատելով աւելի առաջն գնում քան թէ շամախեցիք։ Օր. Մադրասա գիւղը, որը գտնւում է 7—8 վերստ հեռու, իւր գինու վաճառականութեամբ աւելի ծաղկած դրութեան մէջ է քան թէ Շամախին։ Իմ նպատակս չէ այստեղ վաճառականական գիտողութիւններ ա-

ՖԵԼԻԵՏՕՆ

Չէ որ մարդս էլ կենդանի է, ուրեմն և նորա գործերն ու կեանքն կենդանիների կեանքին պիտի նմանի, նրանցից մարդս էլ օրինակ առնի, նոցա կենցաղավարութեան կանոններին հետեւի։ Թէև բանականութիւն ևս ունի մարդը, բայց այդ բանականութիւնը լուսնելու և իւր մէջ Աստուծոյ նմանութիւնը խեղդելու համար և զգացմունք ու կիրք էլ ունի, որոնք բանականութեան յաղթելով նրան կատարեալ կենդանի են անում։ Ոչքան ուղղի զարգացումը պակաս է մի մարդու կամ ամբողջ հասարակութեան մէջ, այնքան նա մօտիկ է կենդանուն և նորա կեանքով ապրելու ընդունակ։ Ցաւ, ընթերցող, մենք հայերս, հայ հասարակութիւնը, մեծ մասամբ, չատ թոյլ լինելով մասնաւոր զարգացման կողմից, մեր կեանքը օրինակում ենք մրջիւնների կամ մեղուների կեանքից և այսպէս բնական-կենդանական և ոչ բանական կանոններով ապրում։ Այդ կենդանիք անգղին խմբերով ապրում են. բայց իսկապէս կեանք վայելողը նոցանից մի փոքր մասն է, մինչդեռ մեծ բազմութիւնը կազմում է մշակ դասն, որ մեքենաբար աշխատում է, ամբողջ կեանքը ծանրութեամբ անցուցանում է, որպէս դի փոքրաթիւ մասը կամ մի քանիսը հանգիստ վայելեն, ուրիշի աշխատանքն ուտեն։

Ջանազանութիւնը մարդոց և կենդանեաց այսպիսի կենցաղավարութեան մէջ նրանումն է, որ կենդանիք բնազդմամբ այդ կեանքն են վարում, իսկ մարդիկ ոմանք իրանց մտաւոր զօրութեամբ՝ խոհեմութեամբ, խաբեբայութեամբ, յանդգնութեամբ, չհասիրութեամբ, աներեսութեամբ միամիտներին խաբելով այդ կենցաղավարութեան եղանակը ըստեղծում, իրանք չհվում, իսկ բազմութիւնը իրանց համար մշակութիւն։

Այս տիրող, աւելի ճիշդ է ասել հասարակարգ, խումբը ամեն հայ հասարակութեանց մէջ կազմվում է և կենդրոնանում մի որ և է հաստատութեան մէջ կամ տեղ անունով. բայց յետոյ նա աշխատում է կեանքի բոլոր ճիւղերին վերաբերեալ հաստատութեանց մէջ էլ տիրապետող դառնալ և այսպէս բոլոր հասարակութիւնը կապել կաշկանդել իւր ցանցերի մէջ, սարդի նման և ապա այդ բռնված հասարակութիւնը հարստահարել իւր շահերի համեմատ։

Կենդանիք բնազդմամբ ապրելով, նրա աշխարհս ստեղծագործութիւնից ակատ անփոփոխ մի և նոյն կանոններով ապրում են, նոքա դատապարտված են այդպէս ապրելու բնութիւնից ուսոի և նոցա մէջ տիրող դասը երբէք չունի դիմադրութեան մշակների կողմից, որոնք միշտ մշակ պիտի մնան. իսկ մարդիկ որովհետեւ բանական են և ընդունակ զարգացմանը իրանց կենցաղավարութեան եղանակը փոխելու և իւրեանց հակացողութեան համեմատ նրան կերպարանաւորելու. ուսոի ոոցա մէջ կազմված հարստահարող խմբերն երկիւղ կրելով մարդ-մշակ դասի այնքան ամեն կերպ աշխատում են կեանքի ամեն ճիւղերում տեղ բռնելու իրրև դեկավար, որ մի գուցէ այլք այդ տեղերը բռնելով և գործելով զարդանան, պարզ տեսնեն ու հասկանան այդ հարստահարող խմբի վնասակարութիւնն և քանդեն նոցա պլանները և արգելք լինեն նոցա բարօրութեան, որ է ի վնաս բազմութեան չհնարին։

Այս պատճառով նոքա իրանց գործած կեանքի հիւսուածքի ոչ մի ծայրը չեն ուզում բաց թողնել ձեռքից, որպէս զի բոլոր հիւսուածքը չը լուծվի, ոսկորը քանդվի և որսերը ազատվին նոցա ճանկերից։ Սորա համար է, որ մենք տեսնում ենք այսպիսի խմբերի անդամներին ճիզվիտական կանոնով վարվելիս կեանքի մէջ, թէ նպատակը սրբում է ամեն միջոց։ Այս այսպէս լինելից յետ զարմանալի չէ, երբ տեսնում ենք, որ նոքա գործ են դնում նպատակին հասնելու համար, խարդախութիւն, խարեբայութիւն, նենդութիւն, ստորութիւն, կաշառք, արդարութեան դէմ մեղանչում են, ստութիւնը, երբ սա ձեռք է ասվիս, գրկում են, գիմադրող և բոլոքող աղդարին դէմ որոգայթ լարելով և զրպարտելով նորա ազդեցութիւնը ջնջել ջանում և կամ եթէ սա թոյլ է համոզմանց կողմանէ իւրեանց ընկերութեան մէջ ընդունում լուսնելու համար, և այլ ամեն տեսակ անհրելի միջոցներ գործ դնում իրանց հարստահարիչ դիրքը պահպանելու համար։

Ահա այս է պատճառն, որ տեսնում ենք մեր հասարակութեանց մէջ մի և նոյն անձանց ամեն տեղ, ամեն հաստատութեանց մէջ տիրող կամ անձամբ կամ իրանց արբանեակների միջնորդութեամբ։ Նոցա գործն է չարունակ հրահրել գիտել, թէ ուր կ'երթի մի անձն, որտեղից մի լուրըէ, դիմախօսութեան ձայն կը լսվի, խոհոյն իրանց որոգայթները կը լարեն այդ անձի դէմ և կը լռեցնեն այն ձայն, որ ուրիշներ՝ թըմբրածների ականջին չը հասնի և չը զարթնեն մահամահ քնից և անհանգիստ չանեն հարստահարիչների անզորրութիւնն ու երջանկութիւնն, որոյ հիմքն է բազմութեան թմրութիւնը կամ բռնազդմամբ ապրիլը, բանականութեան չը հետեւելը։

—

Օրինակի համար վեր առնենք մի քանի հայ հասարակութիւնք և կը տեսնենք իւր նկատողութեանց ճշմարտութիւնը, նորա հաստատութիւնը։ Մեր մէջ երկու նշանաւոր հայ հասարակութիւնք կան, մէկը Թիֆլիզում, միւսը Կ. Պօլսում, մէկը կարելի է համարել Ռուսաստանի հայերի մայր հասարակութիւն, միւսը Տաճկահայոց։ Տեսնենք այժմ ինչ են այդ հասարակութիւնք, եթէ ոչ իսկոյն մչակների, որոնք աշխատում են մի փոքրիկ խմբի համար, որոնք անզգայարար գործում են և ճգնում այդ խմբակի չոհերի համար, իրանց քրտինքը թափում են նոցա չոայլութեան և քէֆի համար։

Կ. Պօլսում նոքա օճախ են կոչվում, իսկ Թիֆլիզում նոքա առանձին անուն չեն կրում բայց այստեղ աւելի կազմակերպված են և գործանեայ։

Չը գիտենք ինչ անուն տանք այդ խմբակին Թիֆլիզի մէջ, միայն արդեօք յարմար չէր լինել նրանց «փորհրդարանական» փոխարէն բանական կոչել, որովհետեւ ամենից գործունեան դա է, ամենից աւելի իր դիրքը պահպանելու ջանք անողն էլ նա է։ Կ. Պօլսում այդպիսի խմբեր մի քանի են։ Ամենից զօրեղն էր երբեմն Ղալաթիայի օճախն, որ մեծ դեր էր խաղում ազգային ժողովում, ազգային գործերում, երբեմն Խրիմեան Հայրիկին պատրիարքութիւնից տապալում և Ներսէս սրբազանին գահը բարձրացնում. իսկ այսօր երեւում է նրանից զօրեղն է հանդէս եկել, նրան խեղդել ու յաղթել և կաթուղիկոսական ընտրութեան հարցն ինքը վճռել և Ներսէսին համար աւելի քուէ վաստակել, ինչպէս է արել, ինչպէս չէ արել, այդ ընթերցողը կարող է ինքը դուշակել, եթէ Կ. Պօլսի լրագիրներից արտասաւածները և այնտեղից եկած թղթակցութիւնքն ու նամակներն ուշի ուշով է կարդացել և չէ ծիծաղել, երբ երկու հոգի կամ երկու կողմում կանգնած անցնող պատգամաւորներից ձայներ որսալիս է տեսել, մանաւանդ եթէ բարեգործական նպատակով մէհմէլիներն ևս հանդէս եկած կը լինին գործելու և մարդոց վերայ աղդելու, իսկ գոյա գործունեութիւնը մեծ է, նոցա նշանակութիւնը ազդու է, դէմքով գրաւիչ են, ձայնը քաղցր, ինքն ամենին սիրելի, մանաւանդ համոզմունք ծախողներին յայտ յարգելի և անդիմադրելի։ Այս նպատակում օճախը «խորհրդարանական կուսակցութիւնն» պատասխան անունն է կրում։ Սորա գործունեայ և գործող անդամներ պ. Կարայ և Զաքրեան են համարվում, որոնց առաջինն Թիֆլիզի հայ թատրոնի այցելուները լաւ են ճանաչում, երկրորդին էլ անչուշտ չատերն են յիշում, որ իբրեւ Զէյթունի պետուր և նորա գործերի համար հալածված վիրաւորված էր ճանապարհորդում և ազդի (?) համար գրամ մուրում, ահա այս-

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԵԾ ԳՐՈՂ

Հայկական Սովետական մեծ գրողը։ Ահա այն մականունը, որ ամենից ճիշտ կերպով կարող է բնորոշել Հովհաննես Թումանյանի դերը հայ ժողովրդի կյանքում

ՎԱՆԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՔ

Տարեգրքի հրատարակությունը կսկսվի 1883 թվականի հունվարի 1-ից։ Տարեգրքի մեջ կմտնեն հետևյալ հոդվածները։

1) Վ. Թիրակյան. Վանի նահանգի ընդհանուր նկարագրությունը։ Նահանգի բաժանումը գավառների։ Գավառների նկարագրությունը։ Գավառների կենտրոնները։ Գավառների գյուղերի թիվը։ Գավառների բնակչության թիվը։ Գավառների հողերի որակը։ Գավառների ջրերը։ Գավառների անտառները։ Գավառների լեռները։ Գավառների հանքերը։ Գավառների կենդանական աշխարհը։ Գավառների բուսական աշխարհը։ Գավառների կլիման։ Գավառների ճանապարհները։ Գավառների հաղորդակցության միջոցները։ Գավառների առևտրական կենտրոնները։ Գավառների արդյունաբերությունը։ Գավառների գյուղատնտեսությունը։ Գավառների անասնապահությունը։ Գավառների մեղվաբուծությունը։ Գավառների այգեգործությունը։ Գավառների բանջարանոցները։ Գավառների հացահատիկները։ Գավառների ընդհանուր բերքը։ Գավառների սպառումը։ Գավառների արտահանումը։ Գավառների ներմուծումը։ Գավառների մաքսային տուրքերը։ Գավառների հարկերը։ Գավառների դրամական շրջանառությունը։ Գավառների բանկերը։ Գավառների փոստային հաղորդակցությունը։ Գավառների հեռագրական հաղորդակցությունը։ Գավառների կրթական հաստատությունները։ Գավառների գրադարանները։ Գավառների թանգարանները։ Գավառների հիվանդանոցները։ Գավառների դեղատները։ Գավառների բժշկական անձնակազմը։ Գավառների վարչական անձնակազմը։ Գավառների դատական անձնակազմը։ Գավառների ոստիկանական անձնակազմը։ Գավառների զորքերը։ Գավառների ռազմական ամրությունները։ Գավառների զինապահեստները։ Գավառների զինագործարանները։ Գավառների զինամթերքի պահեստները։ Գավառների զինամթերքի գործարանները։ Գավառների զինվորական հիվանդանոցները։ Գավառների զինվորական դեղատները։ Գավառների զինվորական բժշկական անձնակազմը։ Գավառների զինվորական վարչական անձնակազմը։ Գավառների զինվորական դատական անձնակազմը։ Գավառների զինվորական ոստիկանական անձնակազմը։ Գավառների զինվորական զորքերը։ Գավառների զինվորական ռազմական ամրությունները։ Գավառների զինվորական զինապահեստները։ Գավառների զինվորական զինագործարանները։ Գավառների զինվորական զինամթերքի պահեստները։ Գավառների զինվորական

— «Presse» լրագրում կարդում ենք, ս. Յովակիմ III ընդհանրական պատրիարքի հրաժարումից և խառն յանձնաժողովի նորա տեղ ժամանակաւոր վիճանորդ ընտրելից յետո, Կոստանդնուպօլսում չաւոյ պէտք է տեղի ունենայ նոր պատրիարքի ընտրութիւնն, որ արեւելեան քրիստոնեայ աշխարհի համար մեծ նշանակութիւն ունեցող իրողութիւն է, որովհետև պատրիարքը ընդհանրական պետն է Յաճկաստանի բոլոր օրթոդոքս քրիստոնէից։ 1860 թ. ընտրողական կանոնադրութեան հիման վերայ պատրիարքարանի իրաքանչիւր եպիսկոպոս իրաւունք ունի մի ընտրելի նշանակել և այս մասին իւր գեկուցումն տալ կնքած ծրարով, հրաւէրը ստանալից յետո երկու չաբաթվան ընթացքում։ Ընտրութեան մանակցել կարող են 100 աշխարհականք, սինոդի 12 անդամք և այս միջոցին Կ. Պօլսում գտանվող բոլոր եպիսկոպոսները։ Ժողովի անդամներից իւրաքանչիւրը միայն մի ձայն ունի։ Թէ ընտրողներն և թէ ընտրվողները պէտք է օսմանեան հպատակ լինին։ Որովհետև պատրիարքը, բացի իւր կրօնական պարտականութենից կատարումից, պէտք է հսկէ կայսերական բերթաների յիշուած արտօնութեանց կատարման վերայ, որ շնորհել է Մեհմէդ II և հաստատել են նորա յաջորդներն և ներկայ սուլթանը, ուստի և պարզ է, որ նա պէտք է վայելէ հաւատարմութիւն այն կառավարութեան, որից կախված է նորա հաստատութիւնը և որ ունի իրաւունք իւր հաւանութիւնը չը տալու նորա հաստատութեան։ Ընտրող ժողովը իրան առաջարկված ընտրելիներից նշանակում է որչեալ թիւ անձանց, որոնից ոչ աւելի, որոնք աւելի ձայն են ստացած և այս անձանց ցուցակը հաղորդում է Բ. Դրան, որ այդ ցուցակից ջնջում է նոցա անունները, որոնց ընտրութեան նա հաւան չէ։ Մնացածների միջից ընդհանուր ժողովը ընտրում է երեք ընտրելիներ, որոնցից մէկին միայն եկեղեցական ընտրողները նշանակում են պատրիարք, որոյ վերջնական հաստատութիւնը կախված է Բ. Դռնից։

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Արքունի կալուածոց նախարարութիւնը նշանակել է մանագիտական յանձնաժողով տեղկութիւնք հաւաքելու համար այն դիւղացոց կալուածքների մասին, որոնք բնակում են արքունի գիւղերի վերայ Քութայիսի և Երեւանի նահանգներում։ Այս յանձնաժողովի անդամները եկել են Թիֆլիզ, ուր կը մնան մի ժամանակ այստեղ ղրուար նիւթեր հաւաքելու համար, որոնք կարող են նպաստել նրանց ծանօթանալուն այն տեղերի հետ, որոնք պէտք է ուսումնասիրեն։

***

Թիֆլիզում այս տարի գարունը նման է աւելի աշնան, անընդհատ անձրեւներ, գրեթէ ամեն օր, և զովութիւն օդի մէջ։ Դեռ կարծես ջերմութիւն չը կայ, իսկ դիչերները զով զդալի է շատ։

ՄԵԾ-ՂԱՐԱԲԻԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են.—Յաւելից սկսած օրերը լաւացան, մէկ օր անձրեւ է լինում յետ միւս օրը պարզ արեգակ, կանաչը արդէն բարձրացրել է իւր գլուխը գետնից. զիւղացիք, որ թմրած էին երեք ամիս ձմրան ուժի տակ, այժմ կազդուրված գարնան թարմութով սկսել է իւրեանց գաշտային աշխատութիւնը։ Շատ հիանալի անասան է ներկայացնում այժմս փամբակու կանաչազարդ դաշտը՝ իւր դեռ նոր կանաչած անտառներով։

***

Նոյն տեղից գրում են.—Ղարաքիլիսից հինգ վերստ հեռաւորութեան վերայ դէպ արեւմուտք մինչ ոչչազ անտառած գիւղը, ճանապարհի աջ և ահեակ կողմերում, տեղիս կառավարիչը՝ աւազօղնականը Ալէքսանդրօպօլի գառառապետի, ինչպէս պատմում են, հանձայն անօրինութեան երեւելի պարոն նահանգապետի, ծառեր է տնկում։ Շատ գեղեցիկ կարզադրութիւն, ում կողմից որ եղած. էլ լինի, որովհետև ամեն մի ուղղով առանց ուրիշ ապաւորութիւն զգալու չի կարող անցկենալ նոյն ճանապարհից։ Լաւ կը լինէր եթէ մեր պարոն աւագ օգնականը, բարեհաճէր մի փոքր էլ ուշ դարձնել նաև գիւղիս մի քանի անանցանելի փողոցների կանոնաւորութեան և տեղ տեղ մաքրութեանց վերայ. կարծեմ ամեն մէկը համաձայն է լինճ հետ, որ դիւղը թողած անվայել դրութեան մէջ հարկ չը կայ գիւղից դուրս զարդարանք ընկսելու։ Բայց մի կողմից այդ տանուտէրի էլ պարտականութիւնն է։

***

Վաղը երկուշաբթի ամսոյս 30-ին Արծրունու թատրոնում կ. Պօլսոյ յայտնի կոմիկ-դերասան պ. Թուրեանը, մանակցութեամբ հայ դերասանական խմբի և իշխանուհի Անդրոնիկովի կը տայ իւր վերջին ներկայացումն։ Կը ներկայացնվին առաջին անգամ 1. Մէկ հարսնացու, կոմէդիա մի արարուածով, 2. Տիկինը ննջում է, կոմէդիա մի արարուածով և 3. Թէնդերու բժիշկը, նոյնպէս կոմէդիա մի արարուածով։ Ներկայացման վերջին իշխանուհի Անդրոնիկովը կը պարէ լէզգինկա։ Գները սովորական են և տոմսակ կարելի է ստանալ թատրոնի կասսաում։ Սկիզբն է 8 ժամին երեկոյեան։ Ուսանք, որ Թիֆլիզի հայ հասարակութիւնը կը յարդէ կ. Պօլսի կոմիկ-դերասանի հրաժարական ներկայացումն իւր այցելութեամբ և ցոյց կը տայ իւր համակրութիւնը դէպի ազգային թատրոնը։

***

Կովկասի արեւմտեան մասը ճահիճներից ազատելու և արեւելեանը ջրանցքներով ոռոգելու համար արքունի կալուածոց նախարարը, ինչպէս գրում է С. Петер. Вѣд. լրագիրը, ներկայացրել է բարձրագոյն իշխանութեան մի ծրագիր։ Սորա հետևանքն այն է եղել, յիշեալ լրագրի ասելով, որ արդէն ձեռնարկել են Բամիումի չրջակայքը ցամաքեցնել ջրանցքներ փորելով։ Իսկ վերաբերութեամբ անասուն երկիրները ջրանցքներով ոռոգելուն, այս մասին արքունի կալուածոց նախարարութեան մէջ կազմվում է ծրագիր իրաւանց ջրի մասին և Կովկասի ոռոգման կարգի վերաբերութեամբ։

***

Նոյն լրագիրը հաղորդում է, որ Կովկասում սրճի մշակութեան նպաստելու համար կազմվում է ծրագիր ռուսաստանի պետական ակցիզի հաստատութեան թեթևացնելու եղանակների մասին։ Ինչպէս ասում են այս փոփոխութիւնքը չուտով կ'սկսեն գործադրվել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երբ ծովի ալեկոծեալ մակերոյթը ձէթ ածելով խաղաղացնելու փորձը յաջողութիւն դուաւ, մի անգլիացի ինժինէր պ. Գօրդօն չինաց դանդ ռումբի ձեով, որ լցվում է ձէթով և կարող է մարմրից արձակվիլ։ Այս գնդի պատուիլից յետ ձէթը տարածվում է ջրի երեսին և հարթում է նորա մակերևոյթը։ Ռումբն ունի երկու պատրոյկ, որոնք վառվում են պայթումից հինգ մրոպների մէջ և չարունակում են այրվիլ նոյն իսկ ջրի տակ. Սոաերումն այս նոր գիւտի վերաբերեալ եղան երկու նաւերի մէջ ջրի ալեկոծված մակերոյթը խաղաղացնելու համար։ Ռումբը արձակվեցաւ նաւերից մէկի վրայից, պայթեցաւ նոցա մէջ տեղումն և ձէթի ազդեցութեամբ ծովի մակերևոյթը խաղաղեցաւ։

***

Ցիւրիխից եկած լուրերը ցոյց են տալիս, որ սիփ ախտը մի քանի չաբաթ չարունակ զարհուրելի կերպարանք ստացաւ և տարածվեցաւ ոչ թէ քաղաքում միայն, այլ և չրջակայքում։ Ներկայումս հաչվում են մօտ 600 հիւանդ դիֆով և եղած հիւանդանոցները չատ անբաւարար են երեսում հիւանդների ընդունելութեան համար. մինչև անգամ մարմնամարզութեան դահլիճները հիւանդանոց են դարձրել, բայց և այնպէս դեռ ևս ախտի նուազումն չէ նկատվում։ Ժնեվայում նոյնպէս կատաղի է սիփը։ Ախտի ծագման պատճառ համարում են վատ ջրի ազդեցութիւնը։

***

Ներկայումս վխտադէնում ապրող աւստրիական եղիսաբէթ կայսերուհին իւր Մարիա-Վալերիա աղջկայ և իւր ծառայողների հետ մօտ 30 հոգի բնակվում է «Տարվայ չորս եղանակ» կոչվող հիւրանոցում։ Վխտադէնի հասարակութիւնը չատ է հետաքրքրվում իւր օգոստափառ հիւրով, որ ինչպէս յայտնի է չատ սիրում է ձիարչաւ։ Եղիսաբէթ կայսերուհին ամեն օր մի ծառայի ուղեկցութեամբ անում է բաւական ճանապարհորդութիւն ձիով, բացի դրանից ամեն առաւօտ անում է մարմնամարզութիւնք, որոց մէջ նա ցոյց է տալիս կնոջ համար զարմանալի ոյժ և ճարպիկութիւն։ Կայսերուհին Հէյդելբէրգից ապագարեց սուսերամարզութեան ուսուցիչ, որ մեծ համբաւ ունի և ամեն օր պարտք է համարում սուսերամարզութիւն անելու նորա հետ, ցոյց տալով այնպիսի հաստատամտութիւն և անխոնջութիւն, որ պատիւ կը բերէին փորձառու սուսերամարտիկին էլ։ Նորին Մեծութիւնն իւր բնակարանի մի սենեակը դարձրել է մարմնամարզութեան դահլիճ։ Այսպիսի գործունեայ կենսագավարութեան չնորհիւ կայսերուհին, չը նայելով իւր 46 ամեայ հասակին պահպանել է նշանաւոր տակտութիւն և թարմութիւն։ Նա չատ հաճախ է այցելութիւն անում այլ բարերատիճան անձանց, որոնք այժմ նոյնպէս հիւր են վխտադէնում և մինչև ցայժմ դեռ ևս եղած չէ վխտադէնի թատրոնում։ Հաւանական է, որ էլի երեք չաբաթ հիւր մնայ վխտադէնում։

***

Անգլիական լրագիրները գրում են, որ Հնդկաստանը մեծամեծ յառաջադիմութիւններ է անում կանանց անկախութեան—ազատութեան վերաբերութեամբ։ Դեռ մօտիկ անցեալում կատարվում էր Սուտտիի հանդէսն և անմիսիթար սրտերի հնդիկ կինը կամայ այրվում էր այն խարոյկի վերայ, որ լսիել էր նորա մարդու դին։ Այժմ մի հնդիկ լրագիր ոչ միայն քարոզում է հարսանեաց ծախսերի կրճատումն, այլ և հրատարակում է իւր էջերում յայտարարութիւնք հնդիկ սրտիսիրների, որոնք կամենում են երկրորդ և երրորդ անգամ ամուսնութեան լծի տակ մանել։ Միայն կանայք չեն ազատված յայտարարութեանց ախտով այլ և ազատարդիկ յայտարարութեանց միջնորդութեամբ ուրանում են իրանց կենակիցս։ Այսպիսի

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.
Հրատարակիչ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ներսիսեան դպրանոցում աշակերտների ստորեան ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ սկսվելու է ապրիլի 27-ին և աւարտվելու է յունիսի 3-ին։

Լոյս տեսաւ

Պ. ԱՐՄԵՆԱԿ ՍԻՒՆԻԻ ՀԵՂԻՆԱՒՈՒԹԻՒՆ.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԻՆԵՐ

վէրնագրով ղրքոյկը, կաթոլիկոսական եօթը ընտրելիների (Ներսէս, Խրիմեան, Մկրտիչ Եսայի, Յարութիւն, Բարդուղիմէոս և Մակար եպիսկոպոսների) կենսագրական տեղեկութիւններով։ Գինն է 15 կոպ.։ Ծախվում է Թիֆլիսում — կենդրօնական և կովկասեան գրավաճառանոցներում և պ. Շահվերդեանի պավիլիոնում։ Երեւան—«Другъ-Дѣтей» գրավաճառանոցում։ Բագու—Միրաքովի և Ագարանովի ծխատոսի մագազիններում, պ. Ջախարովի քարվան-սարայում։ Գանձակ—Հայոց ուսումնարանի ուսուցիչ պ. Գէորգ Ղարաջեանի մօտ։ Ախալքալաքում—Տեղական գրավաճառանոցում։ Մի՛ և նոյն տեղերում վաճառվում է և «Հայաստանի սովը և Էջմիածինը» ղրքոյկը, Էջմիածնի և սովատանջների պատկերներով. գինն է 20 կ.։ Ուրիշ տեղերից կարող են դիմել և հեռագիր հասցէին.— Въ Тифлисъ. На Общественной улицѣ, № 11. Мнацакану Бегларянцу.

Մամուլի տակէ և չուտով լոյս կը տեսնէ

"ԳՈՐԾ"

ամսագրի ՄԻ ՀԱՄԱՐԸ հետևեալ բովանդակութեամբ.

1) Ընթերցողներին։—2) Երեւում են շերմանդպտէ. —3) Բժիշկ կանայք Հնդկաստանում Ս. Թադէոսեան.—4) Սիրոյ երգ. — Պատահական երգիչ.— 5) Սիմոնիհայրը (Գիւրի Դը-Մոպասսանից) Տ. Մատոյեան.— 6) Բուժուտղեան մեր դրականութեան մէջ— Հ. Աւաքեանց.— 7) Գեղջուկի յոյսը. Սրինգ.— 8) Խրիմեան Հայրիկ—Ց. Տէր-Մովսէսեան. — 9) Անձնազոհ նապաստակ (Շէնդրինից) շերմանդպտէ։— 10) Մի պատահար. —Ս. Հախումեան.— 11) Նամակներ ընկերին. Ընկեր.—12) Ներքին տեսութիւն.— 13) Մամուլի տեսութիւն.—14) Յայտարարութիւններ։

Համարի գինն է մէկ (1) ռուբլի։ Հասցէն.— Въ г. Тифлисъ. Редакція „ГОРЦЪ". На Головинскій Проспектъ, домъ Акопова № 30.

Մամուլի տակից դուրս եկաւ հրատարակութեամբ

Զ. ԴՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍԵԱՆ» ԴՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻ

Եաղուբեանի «Վանի Արձանագրութիւնները» և նրանց նշանակութիւնը առաջաւոր Ասիայի պատմութեան համար գինն է 30 կոպէկ։

Մինչդեռ տեղը վաճառվում են հետեւեալ նոր դուրս եկած գրքերը

1) Ջարբհանալեանի «Հայկական Մատենագրութիւն» ցուցակ գրեանց 1865—1883 թ. գինն է 3 ռուբլի 50 կոպէկ.—2) Օր. Մինիկի «Գարնան մի Աստղ» նորավէպ. Կ. Պօլիս գինն է 30 կ.— 3) Բաֆֆի «Ջալալէդդին» հետևակի պատկերով դ. 1 ռ.— 4) Բաֆֆի «Կայէնի կատկը» 1 ռ. 20. կ.— 5) Շերբեր Պատմութիւն Անդղիական վաճառականութեան 1 ռ. 25 կ.— Նոյնպէս ստացուած են վ. հ ե ն ո ա յ ի ց մինչև այսօր հետևեալ գրքերը— 1) «Համառօտ երկրագործութիւն» Վէյմաուտի 1 ռ. 65 կ.— 2) «Գործնական վաճառականութիւն» Հաճբարեանի 2) ռ.— 3) «Գիտութիւն վաճառականութեան» Տէրտերեանի 1 ռ. 60 կ.— 4) «Գաղեերէնէ Հայերէն» բառարան Լիմոնեանի 8 ռ. 50 կ.— 5) «Գործնական Արեւտաստութիւն» Զաղըեանի 1 ռ. 50 կ.—6) «Պատմութիւն մատենագրութեան Հայոց» Գամբէեանի 55 կ.— 11) «Քերականութիւն արդի Հայերէն լեզուի» Աչտենեանի 1 ռ. 50 կ.— 12) «Առաջնորդ նամակագրութեան» Հայերէն և Ֆրանսերէն 2 ռուբլի։

7—10

ԳՈՒՐՍ ԵԿԱԻ ՄԱՄՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ

Զ. Գրիգորեանի Կովկասեան գրավաճառ. հրատարակութեամբ

Մ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑԻ

դասագիրք

ԹՈՒՐՔԱՆՈՒԹԻՒՆ

Հայոց ուսումնարանների համար. — Երկրորդ տպագրութիւն։

Գինն է 65 կոպ. Դիմողներին 20% զեղչումն կը լինի։

Մինչդեռ տեղը վաճառվում են մինչդեռ աշխատասիրողի հետևեալ գրքերը։ 1) Ժողովածու թուաբանական խնդիրների մեծ առաջին 4-րդ տպագրութիւն, գինն է 50 կոպ.— 2) Մեծ երկրորդ կատարեալներ, 3-րդ տպագրութիւն, գինն է 50 կոպ.— Գումարով գնողներին 21% զեղչումն է լինում։

ДОЗВОЛЕННО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ, 28-го Апрѣля 1884 г. Типограф. М. Рот. и К-о. На Гол. проспектѣ Домъ № 41.

Տպարան Մ. Ռոտինեանց և ընկ.